Վահան Թոթովենց

Սստվերները

Գեղեցկությունները ծածկված են ստվերներով. ստվեր կա կյանքի ամեն երևույթի վրա:

Արշալույսները ստվերներու ծոցեն կպատռին, ինչպես շուշանները՝ կոկոններեն:

Սրտերը կծկված են թանձր ստվերներու տակ, ինչպես երազող աչքերը, որոնք գոցված են, բայց կտեսնեն:

Կյանքը շատ տափակ և կյանքի երգը շատ գռեհիկ պիտի ըլլար, եթե ստվերներու խորհուրդը չըլլար: Լեռները, անտառները այնքան հավիտենական և աստվածային չպիտի ըլլային, եթե մեծության ստվերը չըլլար անոնց վրա:

Ահավասիկ ոսկեսափորը ուսերնին՝ հարսներ, որոնք դեպի արշալույսը կքալեն, անոնք երկրպագելի չպիտի ըլլային, եթե համեստության ստվերը չծածկեր անոնց կուրծքերը, եթե ոչ՝ անոնց վարդակարմիր ժպիտը պիտի ըլլար փրփուրը զզվանքի և ատելության:

Միայն մահը ստվեր չունի: Մթությունը ստվեր չունի: Մահը ինքնին ստվերն է կյանքին:

Ստվեր կա հանճարի ճակատին, ստվեր կա մանկան անբծության վրա:

Տիեզերքի բոլոր գանձերը ծածկված են հող ստվերին տակ: Ծովերը ստվերներ են անհուն հարստությանց: Կյանքի հսկա մտածումները ծածկված են գանգերու

մեջ: Սուրը պատյան ունի: Վրեժը կաճի լռության ստվերներուն մեջ: Սերը խորն է սրտերուն: Կույսերը կճառագայթին սրսկապաններու ետին: Օ՜, գեղեցկությունը՝ քողերու խորհրդավորությանը մեջ…

Աշխարհը ծածկված է անհունության ստվերով:

Ժամանակը մեծ ստվերն է սերունդներու պատմության: